ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՅՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ինովացիայի վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 5.3. Ուսուցողական այց

Ֆինլանդիայի ազգային վիճակագրական ծառայություն

2016թ. հունիսի 7-10-ը

Վերջնական տարբերակ

Հայաստանի
Հանրապետության ազգային
վիճակագրական
ծառայություն

STATISTICS
DENMARK

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 3
2. Քաղած դասեր 3
3. Եզրակացություններ և առաջարկություններ 6
Հավելված 1. Ծրագիր 8
Հավելված 2. Հանդիպումների մասնակիցներ 11

Հապավումներ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎԻ	Ազգային վիճակագրական ինստիտուտ (օր. ՀՀ ԱՎԾ)
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրություն)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս ուսուցողական այցն իրականացվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» թվինինգ ծրագրի 5-րդ բաղադրիչի 5.3 գործողության շրջանակներում:

Ուսուցողական այցի նպատակն էր ստանալ գիտելիքներ ֆիննական փորձի և ինովացիայի վիճակագրության գործնական կիրառման վերաբերյալ, ինչպես նաև նկարագրել, թե ինչպես կարելի է այդ գիտելիքն օգտագործվել ՀՀ ԱՎԾ-ում:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցները ցանկանում են իրենց երախտիքն արտահայտել բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին իրենց աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար՝ ստացված Ֆինլանդիայում, ինչը մեծապես օգտակար է եղել աշխատանքի համար:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները և դիտարկումները պատկանում են ՀՀ ԱՎԾ ուսուցողական այցի մասնակիցներին և կարող են չարտահայտել ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Դանիայի կամ Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունների տեսակետները:

2. Քաղած դասեր

Ուսուցողական այցի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը՝

- Ֆինլանդիայի վիճակագրության փորձը գիտական, տեխնոլոգիական և ինովացիայի ոլորտներում,
- Եվրոստատի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մեթոդաբանությունները, Օսլոյի ձեռնարկի վերանայված տարբերակը,
- հետազոտությունների և մշակումների վերաբերյալ վիճակագրության վարումը Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության կողմից,
- Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության կողմից իրականացված պետական ոլորտի ինովացիայի փորձնական հետազոտությունը,
- Ֆինլանդիայի վիճակագրության բիզնես ռեգիստրը (վիճակագրական միավորներ, նույնականացում, դասակարգում, բիզնես ռեգիստրը որպես բիզնես հետազոտությունների շրջանակ),
- ընտրանք, տվյալների հավաքագրում, խմբագրում և գնահատում,
- Հայաստանում իրականացված փորձնական ինովացիայի հետազոտության տվյալների հավաքագրման վերաբերյալ նկատառումներ և նախնական խմբագրման կանոնների մասին քննարկում,

- Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության կողմից գիտական, տեխնոլոգիական և ինովացիայի ոլորտների վիճակագրության տարածում, տվյալների բազաներ, հաշվետվությունների ներկայացում Եվրոստատին և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանը,
- Ֆինլանդիայի վիճակագրությունում հետազոտողների կողմից ինովացիայի միկրոտվյալների օգտագործման մեթոդներ,
- համագործակցության հետագա ուղղությունները և ակնկալվող արդյունքները:

Ուսուցողական այցի առաջին օրն Արի Լեպալահտին և Մերվի Նիեմին մանրամասնորեն ներկայացրեցին Ֆինլանդիայի վիճակագրության փորձը գիտական, տեխնոլոգիական և ինովացիայի ոլորտներում, անդրադարձան Եվրոստատի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մեթոդաբանություններին, մասնավորապես, Ֆրասկատիի և Օսլոյի ձեռնարկների վերանայված տարբերակներին.

- ✓ Օսլոյի ձեռնարկը հիմա վերանայման մեջ է և կավարտվի 2017թ-ին:
- ✓ Ֆրասկատիի նոր վերանայված տարբերակը բաղկացած է հետազոտությունների և մշակումների (ՀՄ) հինգ հիմնական չափորոշիչներից՝ նորարար, ստեղծարար, անորոշ, համակարգված, փոխանցելի կամ վերարտադրվող:
- ✓ 1960թ-ից ի վեր հավաքագրվել է տեղեկատվություն ՀՄ վերաբերյալ, օգտագործվել է Ֆրասկատիի ձեռնարկը, իսկ 1990թ-ից՝ ինովացիայի վերաբերյալ:
- ✓ Ֆինլանդիայում ինովացիայի վերաբերյալ առաջին հետազոտությունն անցկացվել է 1991թ-ին:
- ✓ 1999թ-ին և 2002թ-ին անցկացվել է ՀՄ և ինովացիայի ոլորտների համատեղ հետազոտություն, որի արդյունքում գրանցվել է ինովացիայի վերաբերյալ տվյալների նվազում:

Ուսուցողական այցի երկրորդ օրն Օուտի Ահտի-Միետտինենը ներկայացրեց Ֆինլանդիայում ընտրանքի, տվյալների հավաքագրման, խմբագրման և գնահատման գործընթացները, Մերվի Նիեմին՝ տվյալների խմբագրման և իմպուտացիայի գործընթացների մասին ակնարկ, Սատու Նուրմին՝ ինովացիայի միկրոտվյալների օգտագործումը հետազոտողների կողմից Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունում, Մերվի Հարկոնենը՝ գիտական, տեխնոլոգիական և ինովացիայի (ԳՏԻ) ոլորտների վիճակագրության տարածման մեթոդները.

- ✓ Օգտագործվում են ընտրանքի տարբեր տեսակներ՝ պարզ պատահական, Բեռնոուլիի, համակարգված, կլաստերային և ստրատաներով ընտրանք:
- ✓ Ընտրանքի շրջանակը պետք է լինի ընդգրկուն, ամբողջական, յուրաժամանակային, բովանդակալից և ճշգրիտ:

- ✓ Տվյալների խմբագրման և իմպուտացիայի ժամանակ հիմնականում կատարվում է տրամաբանական ստուգում և օգտագործվում է հատուկ մշակված SAS ծրագիր:
- ✓ 2013թ-ից գիտահետազոտողները լիցենզիա ստանալու նպատակով հնարավորություն ունեն դիմել Ֆինլանդիայի վիճակագրական ծառայություն, ստանալ միկրոտվյալներ կամ հեռակա մուտք գործել համակարգ և օգտվել անվանազերծված բազայից, սակայն մուտքը Եվրամիության տարածքից դուրս հասանելի չէ:
- ✓ Բոլոր լիցենզիաները ժամանակավոր են և սովորաբար տրվում են առավելագույնը հինգ տարով, սակայն կարող են երկարաձգվել մեկ այլ դիմումով:
- ✓ Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության կայք էջը ներառում է հոդվածներ, աղյուսակներ և գծապատկերներ, իսկ տվյալների բազան՝ ժամանակագրական շարքերով ծավալուն աղյուսակներ ըստ թեմաների, որին շատ նման է ՀՀ ԱՎԾ ArmStatBank տվյալների բազան:
- ✓ Տեղեկատվության տարածման և հանրությանն իրազեկման այլ աղբյուրներ են հանդիսանում Facebook-ը, Twitter-ը, LinkedIn-ը, իսկ պրեզենտացիաները տեղադրվում են SlideShare-ում:

Ուսուցողական այցի երրորդ օրը Հաննա Հալեյալան համապարփակ ներկայացրեց բիզնես-ռեգիստրի գործունեությունը, իսկ Արի Լեպալահտին խոսեց Ֆինլանդիայի վիճակագրության կողմից իրականացված պետական ոլորտի ինովացիայի փորձնական հետազոտության մասին.

- ✓ Բիզնես-ռեգիստրը գործում է տվյալների հավաքագրման բաժնի ներքո և 2013թ-ից ի վեր համարվում է միասնական արտադրական հարթակի մաս:
- ✓ Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունում բիզնես-ռեգիստրը հասանելի է վիճակագրության բոլոր աշխատակիցներին հատուկ մուտքի իրավունքի առկայության դեպքում:
- ✓ Ամեն ամիս բիզնես-ռեգիստրի տվյալները հաղորդվում են Ֆինլանդիայի բանկին և մաքսային ծառայությանը:
- ✓ Բիզնես-ռեգիստրը 2011թ-ից տվյալները ստանում է միայն էլեկտրոնային եղանակով:
- ✓ 2010-2011թթ. իրականացրել են ինովացիայի վերաբերյալ փորձնական հետազոտություն սկանդինավյան երկրների պետական հատվածում: Գլխավոր համակցությունը կազմել է 500, որից ընտրվել է 90-ը:
- ✓ OECD-ն և Եվրոստատը քննարկել են պետական հատվածում ինովացիայի վերաբերյալ կանոնավոր հետազոտություն իրականացնելու հարցը և եկել են այն եզրահանգման, որ ներկայումս դրա անհրաժեշտությունը չկա, ինչպես նաև բացակայում են դրա հետ կապված միջազգային ուղեցույցները:

Ուսուցողական այցի չորրորդ օրը Ֆինլանդիայի վիճակագրական ծառայություն այցելեց զբաղվածության և էկոնոմիկայի նախարարության պլանավորման բաժնի պետ Կաի Հուսսոն և շատ հետաքրքիր պրեզենտացիա ներկայացրեց «ՀՄ և ինովացիայի

վիճակագրություն, ցուցանիշներ պետական քաղաքականության մշակման համատեքստում» թեմայով, որին հաջորդեցին հարցեր և պատասխաններ.

- ✓ Քանի որ ֆինները մեծ կարևորություն են տալիս կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի ոլորտներին, յուրաքանչյուր 25-րդ հարկ վճարողի եվրոն պետական բյուջեի միջոցով ներդրվում է ՀՄ-ում:
- ✓ Ֆինլանդիայում գործում է գիտահետազոտության և ինովացիայի քաղաքականության խորհուրդ, որը գլխավորում է վարչապետը: Հինգ տարին մեկ անգամ Խորհուրդը մշակում և հրապարակում է գիտահետազոտության և ինովացիայի քաղաքականության ծրագիրը:
- ✓ Անցում է կատարվում ավանդական ՀՄ քաղաքականության մշակումից դեպի ՀՄ+ինովացիայի+արդյունաբերության քաղաքականության մշակում, որը մարտահրավեր է վիճակագրության և վիճակագրական ծառայությունների համար:
- ✓ 2016թ. Տվյալներով Ֆինլանդիայում ՀՄ և ինովացիայի ոլորտների պետական ֆինանսավորումը կրճատվել է շուրջ 18%-ով, սակայն Խորհրդի վարած արդյունավետ քաղաքականության շնորհիվ ՀՄ և ինովացիայի ծավալներն աճ են գրանցել:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Ուսումնական այցի ժամանակ պրեզենտացիաները շատ հետաքրքիր և բովանդակալից էին: Շատ ուսանելի էր Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության փորձը ինովացիոն գործունեության վերաբերյալ հետազոտություններ իրականացնելու ոլորտում: Հաշվի առնելով սպառողների պահանջարկի աճը, հատկացվող բյուջեի սահմանափակումները, ստացվող պատասխանների թվի նվազումը՝ որպես լուծում կարելի է առանձնացնել մոդելի վրա հիմնված վիճակագրության մշակումը, ինչպես նաև տվյալների աղբյուրների միասնական համակարգի ստեղծումը (ռեգիստրներ, վարչական տվյալներ, հետազոտության տվյալներ և այլն):

ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը ներկայացրեց իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ինովացիոն գործունեության փորձնական հետազոտության նախնական արդյունքները: Ընտրանքը կազմել է 1719 միավոր, որի 84.5%-ը լրացրել են հարցաթերթեր, սակայն նշվեց, որ լրացված հարցաթերթերի քանակը կավելանա, քանի որ դեռևս գործընթացը շարունակվում է: Ներկայացվեց հետազոտության հարցաթերթի հիմնական հարցերի նախնական ամփոփ տվյալները: Ֆին փորձագետները նշեցին, որ դա լավ արդյունք է և որոշվեց հունիսի վերջին ավարտել հարցաթերթերի հավաքագրումը: Նրանք առաջարկեցին նաև իրականացնել ՀՄ հետազոտություն մասնավոր հատվածում՝ հիմք ընդունելով փորձնական հետազոտության արդյունքները:

Առաջարկվեց նաև թարգմանել հետազոտության բաց պատասխանները և ուղարկել Ֆինլանդիա՝ հոկտեմբերին Երևանում կայանալիք հաջորդ առաքելության ժամանակ քննարկելու և խմբագրելու նպատակով:

Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության փորձագետներն առաջարկեցին նաև ուսումնասիրել OECD-ի կայքէջը, որտեղ առկա են ՀՄ և ինովացիայի ցուցանիշներն ու ինդկատորները: Ցանկալի է, որ ցուցանիշները լինեն տարածաշրջանային մակարդակով:

Այցելությունը հնարավորություն ընձեռեց բացահայտել ՀՄ և ինովացիայի վիճակագրության իրական վիճակը, դրանց գնահատման և հաշվառման հիմնական սկզբունքները, տեղեկատվության հավաքագրման մեխանիզմները, ոլորտում առկա հիմնախնդիրները միջազգային փորձի համադրման տեսանկյունից, կատարելագործել ՀՄ և ինովացիայի վիճակագրության մեթոդաբանությունը և գործիքակազմը, ինչպես նաև ընդլայնել մասնակիցների գիտելիքները ՀՄ և ինովացիայի վիճակագրության ոլորտում առհասարակ, առավել խորությամբ ընկալել հիմնախնդիրները վիճակագրորեն դիտարկելի և չափելի բոլոր ասպարեզներում: Այցելությունն արժեքավոր էր նաև ՀՀ ԱՎԾ-ում և Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունում կիրառվող գործիքների, տեղեկատվական աղբյուրների, մշակվող ցուցանիշների համեմատության ընձեռված հնարավորության առումով:

Ուսուցողական այցը յուրատեսակ ներդրում էր «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ինովացիոն գործունեության փորձնական հետազոտության» հարցաթերթում ցուցանիշների ընգրկվածության, ներկայացման ձևաչափի կատարելագործման գործում՝ ինովացիոն գործունեության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության ամբողջականացման և կայուն վիճակագրական համակարգի ձևավորման առումով, ինչի արդյունքում հնարավոր կլինի ոչ միայն մշակել փաստերի վրա հիմնված քաղաքականություն, այլ նաև վեր հանել երկրում իրականացվող քաղաքականության, ռազմավարության, ծրագրերի ձեռքբերումները և թույլ կողմերը:

Հավելված 1. Ծրագիր

Ամսաթիվ	Երեքշաբթի, հունիսի 7 – Ուրբաթ, հունիսի 10
Վայր	Ֆինլանդիայի վիճակագրություն, Հելսինկի, հանդիպումների սենյակներ, 10-րդ և 2-րդ հարկերում

Ծրագիր

Երեքշաբթի, հունիսի 7, 2016 (հանդիպումների սենյակ, 10-րդ հարկ)

9.30–12.30	**Բարի գալուստ և ծանոթություն Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությանը** Արի ՏԻՐԿԿՈ **Ֆինլանդիայի վիճակագրության միջազգային խորհրդատվական աշխատանքը, ՀՀ ԱՎԾ հետ իրականացվող ԵՄ Թվինինգ ծրագիրը, գործնական հարցեր ուսուցողական այցի վերաբերյալ** Ուլլա-Մարիտ ՍԱՐԻՆԵՆ **Ծանոթացում ծրագրին** Արի ԼԵՊԱԼԱՀՏԻ և Մերվի ՆԻԵՄԻ • **ՀՀ ԱՎԾ պատվիրակությանը հետաքրքրող կետերը և ակնկալիքները** ՀՀ ԱՎԾ պատվիրակություն • **Քննարկում, ուսուցողական այցի նպատակները**
12.30-13.30	**Լանչ**
13.30–16.00	**Գիտական, տեխնոլոգիական և ինովացիայի (ԳՏԻ) ոլորտների վիճակագրության արտադրում. Եվրոստատի և ՏՀԶԿ մեթոդաբանությունները, Ֆինլանդիայի վիճակագրության փորձը** Արի ԼԵՊԱԼԱՀՏԻ, Մերվի ՆԻԵՄԻ և Մերվի ՀԱՐԿՈՆԵՆ • **Գիտական, տեխնոլոգիական և ինովացիայի (ԳՏԻ) ոլորտների վիճակագրությունը միջազգային համատեքստում, Օսլոյի ձեռնարկի վերանայում** • **ՀՄ վիճակագրության արտադրումը Ֆինլանդիայի վիճակագրությունում** • **Ինովացիայի վիճակագրության արտադրում Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունում**

Չորեքշաբթի, հունիսի 8, 2016 (Վարիանսսի հանդիպումների սենյակ, 2-րդ հարկ)

9.30–12.30 **Ընտրանք, տվյալների հավաքագրում, խմբագրում և գնահատման հարցեր**
Օուտի ԱՀՏԻ-ՄԻԵՏՏԻՆԵՆ

12.30-13.30 **Լանչ**

13.30–16.00 **Ինովացիայի միկրոտվյալների օգտագործումը հետազոտողների կողմից Ֆինլանդիայի վիճակագրությունում**
Սատու ՆՈՒՐՄԻ

Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունում առկա սպասարկման կենտրոնի ներկայացում, որտեղ գիտաշխատողներին հնարավորություն է տրվում օգտագործել ընկերությունների մակարդակով տվյալներ գիտահետազոտական նպատակներով

Ինովացիայի հետազոտության որակի հաշվետվություն, ներառյալ մետատվյալները
Մերվի ՆԻԵՄԻ

Գիտական, տեխնոլոգիական և ինովացիայի (ԳՏԻ) ոլորտների վիճակագրության տարածում, տվյալների բազաներ, հաշվետվությունների ներկայացում Եվրոստատին և ՏՀԶԿ-ին
Մերվի ՀԱՐԿՈՆԵՆ, Արի ԼԵՊԱԼԱՀՏԻ

- **Ֆինլանդիայի վիճակագրության կայքէջը, հրապարակումների արդյունքները համացանցում, տվյալների բազաներ**
- **հաշվետվությունների ներկայացում ՏՀԶԿ-ին/Եվրոստատին**

Հինգշաբթի, հունիսի 9, 2016 (Վարիանսսի հանդիպումների սենյակ, 2-րդ հարկ)

9.30–12.30 **Բիզնես-ռեգիստր**
Հաննա ՀԱԼԵՅԱԼԱ

- **Ֆինլանդիայի վիճակագրության բիզնես ռեգիստրի արտադրում**
- **Վիճակագրական միավորներ, նույնականացում, դասակարգում**

Բիզնես ռեգիստրը որպես բիզնես հետազոտությունների շրջանակ

Ֆինլանդիայի վիճակագրության կողմից իրականացված պետական ոլորտի ինովացիայի փորձնական հետազոտություն (միջազգային ուղեցույցների բացակայություն)
Արի ԼԵՊԱԼԱՀՏԻ և Մերվի ՆԻԵՄԻ

12.30-13.30 **Լանչ**

Հայաստանում իրականացված ինովացիայի փորձնական հետազոտության տվյալների հավաքագրման վերաբերյալ նկատառումներ

ՀՀ ԱՎԾ պատվիրակություն

13.30–16.00 **Նախնական խմբագրման կանոնների մասին քննարկում**
Մերվի ՆԻԵՄԻ

Ուսուցողական այցի վերլուծում, նախապատրաստում ամփոփիչ քննարկմանը
ՀՀ ԱՎԾ և Ֆինլանդիայի վիճակագրություն

Ուրբաթ, հունիսի 10, 2016 (Վարիանսսի հանդիպումների սենյակ, 2-րդ հարկ)

9.00–12.00 **Հանդիպում Զբաղվածության և էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի հետ**

Ինովացիոն վիճակագրություն և քաղաքականության կիրառում

12.00-13.00 **Լանչ**

13.00–14.30 **Ամփոփիչ քննարկում, հաջորդ քայլերը բաղադրիչ 5-ի շրջանակներում**

Հավելված 2. Հանդիպումների մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ

Պրն Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Տկն Նելլի Բաղդասարյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ
Տկն Աննա Հակոբյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ
Տկն Ալինա Գրիգորյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ

Թվինինգ ծրագիր

Սոնա Միրզոյան, թարգմանիչ

Ֆինլանդիայի վիճակագրություն

Պրն Արի ՏԻՐԿԿՈ, Բաժնի պետ, Գլխավոր տնօրենի գրասենյակ
Տկն Ուլլա-Մարիտ ՍԱՐԻՆԵՆ, Պլանավորման մասնագետ, Գլխավոր տնօրենի գրասենյակ
Պրն Արի ԼԵՊԱԼԱՀՏԻ, Ավագ խորհրդատու, Բիզնես վիճակագրության բաժին
Տկն Մերվի ՆԻԵՄԻ, Պլանավորման մասնագետ, Բիզնես վիճակագրության բաժին
Տկն Մերվի ՀԱՐԿՈՆԵՆ, Ավագ վիճակագիր, Բիզնես վիճակագրության բաժին
Պրն Յակկո ՍԱԼՄԵԼԱ, Ավագ վիճակագիր, Բիզնես վիճակագրության բաժին
Տկն Օուտի ԱՀՏԻ-ՄԻԵՏՏԻՆԵՆ, Ավագ խորհրդատու, Ստանդարտների և մեթոդիկայի վարչություն
Տկն Սատու ՆՈՒՐՄԻ, Հետազոտության բաժնի պետ, Ստանդարտների և մեթոդիկայի վարչություն

Զբաղվածության և էկոնոմիկայի նախարարություն

Պրն Կաի ՀՈՒՍՍՈ, Պլանավորման բաժնի պետ, Կազմակերպությունների և ինովացիայի բաժին